Հաշվետվություն
Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Տաթևիկ Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   2025 թվականի ապրիլի 2-ից 4-ը, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Բեռլին

4. **Հրավիրող կողմ.**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարար Սվենյա Շուլցե

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Հաշմանդամության համաշխարհային գագաթնաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   - Ներառական աշխատաշուկաներ և արժանապատիվ աշխատանք հաշմանդամություն ունեցող անձանց համար;
   - Քաղաքային զարգացման ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության և ներառականության ապահովում;
   - Ներառական և մատչելի կրթական համակարգեր բոլորի համար;
   - Պետության և մասնավոր հատվածի համագործակցությունը հաշմանդամության ներառական քաղաքականության խթանման գործում;
   - Տեխնոլոգիական նորարարությունները՝ ինչպիսիք են ԱԲ-ն և թվային գործիքները, հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիություն և ինքնուրույնություն ապահովելու համար;
   - Միջազգային համագործակցության ամրապնդումը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և նրանց ներառման առաջմղման գործում;
   - Ապաինստիտուցիոնալացում;

- Հաշմանդամությամբ պայմանավորված ծառայությունների համար անհարժեշտ հավելյալ ծախսեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հաշմանդամության գլոբալ գագաթնաժողովի շրջանակներում ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց գլոբալ ներառման վերաբերյալ Ամման-Բեռլինի հռչակագիրը», որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- ✓ Ներառական աշխատաշուկաների խթանում;
- ✓ Առաջարկվում է նախաձեռնել պետական և մասնավոր հատվածի համատեղ ծրագրեր՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման նպատակով;
- ✓ Ընթացք՝ աշխատաշուկայի պահանջների վերլուծություն և համապատասխան ծրագրերի մշակում;
  Ակնկալվող արդյունք՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության մակարդակի բարձրացում;
- ✓ Կրթական համակարգի ներառականության զարգացում;
- ✓ Առաջարկվում է ընդլայնել կրթական հաստատություններում մատչելիության միջոցները և բարձրացնել ուսուցչական անձնակազմի պատրաստվածությունը ներառական կրթության ոլորտում;
- ✓ Ընթացք՝ ուսումնական ծրագրերի բարելավում և վերապատրաստումների իրականացում;
  Ակնկալվող արդյունք՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության հասանելիության և որակի բարձրացում;
- ✓ Տեխնոլոգիական նորարարությունների կիրառում;
- ✓ Առաջարկվում է զարգացնել արհեստական բանականության և թվային գործիքների կիրառման քաղաքականություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնության խթանման նպատակով;

- ✓ Ընթացք՝ պետական աջակցության ծրագրերի մշակում նորարար տեխնոլոգիաների զարգացման համար;
  Ակնկալվող արդյունք՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար նորարարական լուծումների հասանելիության ապահովում;
- ✓ Միջազգային համագործակցության ամրապնդում;
- ✓ Առաջարկվում է շարունակել և ակտիվացնել մասնակցությունը միջազգային ծրագրերին և նախաձեռնություններին՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու ներառմանը;
  Ակնկալվող արդյունք՝ միջազգային լավագույն փորձի տեղայնացում և ներառական քաղաքականության զարգացում՝ հիմնելով համայնքահեն հասանելի ծառայությունների շղթա՝ըստ գնահատված կարիքի;
- ✓ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում անցկացված Հաշմանդամության համաշխարհային գագաթնաժողովը հնարավորություն ընձեռեց ուսումնասիրելու միջազգային առաջատար փորձը՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, տարբեր երկրների ծառայությունների մատուցման շրջանակը;
- ✓ Նախատեսված առաջարկությունների իրականացումն էապես կխթանի պետական քաղաքականության արդյունավետությունը, կապահովի հաշմանդամություն ունեցող անձանց համար ավելի արժանապատիվ պայմաններ ապահովելուն, ծառայությունների շրջանակի հասանելիության ընդլայնմանը և կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք ներգրավմանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Recoverable Signature

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293